



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2011 թվականի N 428- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՇԵՆ ԵՎ ԶԱՌ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածով և 145-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն և Զառ գյուղական համայնքների ղեկավարների հերթական ընտրություն 2011 թվականի դեկտեմբերի 25-ին:
2. Առաջարկել թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին՝ հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումներ:
3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն և Զառ գյուղական համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:
4. Տեղեկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մրգաշեն և Զառ գյուղական համայնքների նորընտիր ղեկավարներին, որ լիազորությունները պետք է ստանձնեն 2012 թվականի հունվարի 29-ին, այն ամրագրելով իրենց որոշմամբ:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյանի վրա:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ